Կ Ա Ր Ծ Ի Ք

Քրիստինե Աշոտի Սարգսյանի «**Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման գործընթացում**» ժգ.00.02 - «Դասավանդման եվ ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտացմամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

21-րդ դարում անհանարին է պատկերացնել ուսուցման ոլորտը առանց տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն է ընձեռում կազմակերպելու փոխներգործուն դասեր, կիրառելու տեսալսողական ժամանակակից միջոցներ: Մուլտիմեդիա տեխնոլոգիան դարձել է օտար լեզուներ սովորելու հիմնական գործիքը: Նրա առաջնային գործառույթն է ապահովել շփում տարբեր մասնագիտություն, ազգային պատկանելություն ունեցող մարդկանց միջև:

ՏՀՏ օգտագործումն օգնում է ուսանողներին զարգացնելու ինքնուրույն ուսուցման հմտություններ, ստեղծագործական և քննադատական մտածողություն և բարդ իրավիճակներում ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն:

Ատենախոսը խնդիր է դնում մշակել և ՀՀ բաձրագույն կրթության ոլորոտում դասավանդվող գործարարական անգլերենի դասընթացում ներդնել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ և մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդել: Ատենախոսության կարգային-հասկացական համակարգը ձևակերպված է ճիշտ, հավուր պատշաճի: Դա վերաբերում է հետազոտության նպատակին, խնդիրներին, օբյեկտին, առարկային, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությանը:

Հետազոտության գիտական նորույթը հաստատվում է հետազոտության ընթացքում և արդյունքում:

Քրիստինե Սարգսյանը նշում է, որ եթե գործարարական անգլերենի դասընթացում ներդրվի մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ, և կիրառվի մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքներին համապատասխանող վարժությունների համալիր և

մշակվի գործարարական անգլերենի ուսուցման՝ մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված մոդել, ապա լիարժեքորեն կապահովվի ուսանողների՝ լեզվանյութը յուրացնելու արդյունավետությունը:Այս առաջադիր վարկածը ամբողջովին հաստատված է կատարված հետազոտության արդյունքներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից: Այն պարունակում է 9 գծապատկեր, 1 աղյուսակ, 5 տրամագիր, 1 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 149 համակարգչային էջ:

«Մուլտիմեդիա տեխնոլոգիայի բովանդակությունը, ներդրման տեսությունը և պրակտիկան» վերնագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Մուլտիմեդիա տեխնոլոգիայի հաղորդակցական, համագործակցային ուղղվածությունը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է զարգացած երկրներու կիրառվող կրթական տեխնոլոգիաները և հանգում է այն հետևությանը, որ էլեկտրոնային կրթությունը որպես այդպիսին նախ և առաջ համագործակցային կրթության մեթոդ է, այդ իսկ պատճառով էլ նրան բնորոշ են հուզականությունը, ապրումակցումը, և դրական հուզական ֆոնի առկայությունը, որը կարևոր պայման է դրական արդյունք ստանալու համար:

Դրական է այն, որ նա իր վերլուծությունն իրականացնում է լեզվական, հանրալեզվաբանական, գործաբանական, խոսութային և այլ կոմպետենցիաների տեսանկյունից:

Երկրորդ՝ **«Տեսանյութերի ընտրության չափանիշները գործարարական անգլերենի դասընթացում»** ենթագլխում ատենախոսը քննության է առնում տեսանյութերի ընտրության տեսակները, չափանիշներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով գործարարական անգլերենի դասընթացի առանձնահատկությունները:

Երրորդ **«Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման սկզբունքները գործարարական անգլերենի դասընթացում»** ենթագլխում ներկայացվում են մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքները՝ հաշվի առնելով գործարարական անգլերենի ուսուցման առանձնահատկությունները: Բացահայտվում են մուլտիմեդիա տեխնոլոգիայի գործառույթները: Ատենախոսը նշում է, որ հնարավոր չէ փոխներգործուն դաս կազմակերպել առանց մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման: Սույն ենթագլխում

կարևորվում են մուլտիմեդիա տեխնոլոգիայի շրջանակներում ձևավորված կառուցողական և մուլտիմոդալ մոտեցումները և հիմնավորվում է այն գաղափարը, ըստ որի՝ միայն կառուցողական մոտեցմամբ հնարավոր է ստեղծել ուսուցման ինտերակտիվ միջավայր:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները գործարար անգլերենի դասընթացում»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «**Թվային պատմվածքը և TED դասախոսությունները՝ որպես մուլտիմեդիա տեխնոլոգիայի կարևոր բաղադրիչներ**», ենթագլխում ատենախոսը արծարծում է այն միտքը, որ թվային պատմվածքը մանկավարժական նորագույն այն մեթոդներից է, որը ներգրավում է ուսանողներին խոր և իմաստալից ուսումնառության գործընթացի մեջ: Այս մեթոդի նպատակն է թվային պատմվածքի միջոցով ստեղծել ուսուցման կառուցողական միջավայր: Ատենախոսի կողմից ուսումնասիրվել են դասի ընթացքում պատմություններ և տեքստեր ստեղծելիս թվային պատմվածքի մանկավարժական կողմերը և դրանց ազդեցությունն ուսանողների վրա:

Երկրորդ՝ «**Մուլտիմեդիա նախագիծը գործարարական անգլերենի դասընթացում»** ենթագլխում ներկայացվում է մուլտիմեդիա նախագծի էությունը, դիտարկվում են տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական, խաղային նախագծերի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում: Ներկայացվում են մուլտիմեդիա նախագծի գործառական և բովանդակային բնութագրերը:

Քրիստինե Սարգսյանը հիմնավորվում է այն գաղափարը, որ նախագծային մեթոդը կիրառելով գործարարական անգլերենի դասընթացում՝ ուսանողները զարգացնում են ոչ միայն իրենց օտարալեզու հաղորդակցական, այլև մասնագիտական կարողունակությունները: Կարևորվում է մուլտիմեդիա տարբեր նախագծեր իրականացնելիս համակարգչային-հեռահաղորդակցական միջոցներից օգտվելու կարողությունները: Շեշտադրվում է մուլտիմեդիա տեխնոլոգիայի միջոցով ինքնուրույն աշխատանքի մշակույթի ձևավորման հիմնախնդիրը:

Աշխատանքի **երրորդ՝ «Գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման արդյունավետ մոդելը»,** ենթագլխում

Քրիստինե Սարգսյանը համապատասխան հետազոտության արդյունքների հիման վրա հստակեցնում է այն մոտեցումները, ռազմավարությունները, սկզբունքները, որոնք կարող են հիմք ծառայել գործարարական անգլերենի ուսուցման մեթոդական օպտիմալ համակարգի ստեղծման համար, որը համադրում է ուսուցման ավանդական և այլընտրանքային մեթոդները, մասնավորապես մուլտիմեդիա տեխնոլոգիան: Ըստ ատենախոսի գործարարական անգլերենի ուսուցման օպտիմալ մեթոդական համակարգի հիմքում ընկած է մի մոդել, որը ներառում է նախ և առաջ մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքները:

Քրիստինե Սարգսյանի ատենախոսությունը ավարտուն, ամբողջական հետազոտություն է: Ատենախոսության թեման առանձնանում է իր կիրառական նշանակությամբ և արդիականությամբ՝ հաշվի առնելով մուլտիմեդիա տեխնոլոգիաների արագ զարգացումը և դրանց դերը գործարար հաղորդակցության գործընթացում:

Հետազոտությունը հատկապես արժեքավոր է տնտեսագիտական համալսարանի միջավայրում, որտեղ գործարարական անգլերենի ուսուցումը կարևոր է մասնագիտական հաղորդակցական հմտությունների ձևավորման տեսանկյունից:

Հեղինակը ատենախոսության աշխատանքում անդրադառնում է արդիական և կարևոր թեմայի՝ մուլտիմեդիա տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությանը գործարարական անգլերենի ուսուցման գործընթացում: Նման մոտեցումը համապատասխանում է ժամանակակից կրթական պահանջներին և տեղեկատվական հասարակության զարգացման միտումներին: Աշխատությունում պատշաճ կերպով ներկայացված են մուլտիմեդիա տեխնոլոգիաների տեսական հիմքերը, ինչպես նաև դրանց գործնական կիրառության հնարավորությունները լեզվաբանական և բիզնես հաղորդակցական միջավայրերում:

Դրա հետ մեկտեղ կարելի է ներակայացնել որոշ դիտարկումներ, որոնք հետագայում կարող են բարելավել հետազոտության որակը:

1. Նպատակահարմար կլիներ ավելի խորությամբ ներկայացնել մուլտիմեդիա տեխնոլոգիաների իրական կիրառական մեխանիզմները և դրանց արդյունավետության չափման ցուցանիշները, ինչը կուժեղացներ աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

2. Թեպետ ատենախոսության բովանդակությունը ամբողջությամբ արտացոլում է արդի մեթոդական մոտեցումները և գործնական նպատակադրումները, սակայն կարելի էր առաջարկել որոշ հստակեցումներ՝ կապված «փոխներգործուն ուսուցման գործընթաց» հասկացության բնութագրման հետ: Կարելի էր բացահայտել, թե ինչպիսի փոխազդեցության ձևեր են դիտարկվում համալսարանի ուսումնական միջավայրում՝ ուսանող-դասախոս, ուսանող-ուսանող, թե թվային հարթակի միջոցով իրականացվող փոխազդեցություն:
3. Աշխատության եզրակացությունները ընդհանուր առմամբ համահունչ են դրված նպատակին և առաջադրած խնդիրներին, սակայն կարելի էր ընդլայնել առաջարկությունների հատվածը՝ ընդգծելով մուլտիմեդիա տեխնոլոգիաների ներդրման գործնական քայլերը բուհական միջավայրում:
4. Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ և սպրդումներ, որոնք վերանայման կարիք են զգում:

Այսպիսով, կարելի է նշել, որ ատենախոսը իրականացրել է համապարփակ հետազոտություն՝ ներառելով թե՛ գրականության վերլուծություն, թե՛ փորձարարական տվյալների հավաքագրում և վերլուծություն, ինչը բարձրացնում է աշխատանքի գիտական արժեքը և կիրառական նշանակությունը:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը համապատասխանում է գիտական աշխատանքի պահանջներին, ունի տեսական և կիրառական արժեք, և կարող է օգտակար լինել ինչպես անգլերենի դասախոսների, այնպես էլ կրթական տեխնոլոգիաներ կիրառող մասնագետների համար: Ներկայացված ատենախոսությունը կարելի է գնահատել որպես գիտականորեն հիմնավորված և գործնական կիրառման համար կարևոր ուսումնասիրություն: Դրական է նաև այն, որ հրատարակված հոդվածները և սեղմագիրը համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Եզրակացություն

Քրիստինե Աշոտի Սարգսյանի «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման գործընթացում» ատենախոսությունը ամբողջական, գիտական ու լեզվական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է: Այն լիովին համապատաասխանում է ՀՀ գիտական

աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է ԲԿԳԿ-ի կողմից մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով / գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջները, որն էլ հիմք է տալիս միջնորդելու ՀՊՄՀ-ում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Ընդդիմախոս՝ մանկ. գիտ.թենածու,դոցենտ **Մ.Ա.Դարաբյան**